



**<<ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԲԵՔ ՉԻ
ԼՈՒՒՄ>> ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱ-
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ**

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի մարզային միջոցառումների ծրագրի շրջանակներում Կոտայքի մարզային գրադարանում տեղի է ունեցել <<Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից. պատմությունը երբեք չի լուում>> խորագրով գիտա-վերլուծական դասախոսություն:

Մարզային գրադարանում կայացած ձեռնարկին մասնակցել և ներկաներին ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանի ողջույնի և ոգեկոչման խոսքն է փոխանցել Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանը:

Մինչ դասախոսության մեկնարկը գրադարանում կազմակերպվել է Հայոց Մեծ եղեռնին նվիրված գիտական, գեղարվեստական և վավերագրական գրքերի ցուցադրություն:

Գրքերի ցուցադրությանը հաջորդել է Հայաստանի գրողների միության Կոտայքի մարզային բաժանմունքի ղեկավար Հակոբ Հարությունի <<Կապույտ հագ>> գրքի շնորհանդեսը:

Այնուհետև Կոտայքի մարզային գրադարանի նիստերի դահլիճում տեղի է ունեցել <<Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից. պատմությունը երբեք չի լուում>> խորագրով գիտա-վերլուծական դասախոսություն:

<<Ցեղասպանության տերմինի ծագումնաբանությունը և մի շարք պատմական իրողություններ>> խորագրով դասախոսություն է ընթերցել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի աշխատակից, ցեղասպանագետ Լիլիթ Մարտիրոսյանը:

Գիտա-վերլուծական դասախոսության ընթացքում <<Եղեռնի գեղարվեստական անդրադարձը նորոյա գրականության մեջ>> թեմայով համապատասխան վերլուծականով հանդես է եկել Հայաստանի գրողների միության Կոտայքի մարզային բաժանմունքի ղեկավար: Մարզային միջոցառման հյուրերին իրենց գեղարվեստական կատարումներով ողջունել են Հրազդանի N 1 և N 2 երաժշտական դպրոցների ուսուցիչներն ու սաները: